

52

220

Գրիգոր Առաքելական  
**ՀԵՍՈՒՍ**  
 ԵՍԱԳՐԻՔ ԱԿԱԴԵՄԻԿԻ

ԵՐԵՎԱՆ Է 1861 թ.

Թատրոնի հանձնաւ

ՅԵՒԳՎԱՀԱՆՐԱ ԲԱՐԵՎԻ

A  



---

167

—

Դ ՕՐԵԻԱՆԻ

Դ Տպարանի Առաջին Առիթի թիւ



ՅԱԿԱՐԴԱՎՈՐԻ ԱՆԴԻՆԻ :

Աս փոքրիկ աստղաբաշխութեան գիրքը Անգղիարենէն  
թարգմանվեցաւ յատուկ տղոց համար, ու մանաւանդ դրա-  
բատուններուն պիտանութեանը համար :

Ան ամէն մէկ պարբերութիւններուն տակի եղած հարցում-  
ները վարժապետներուն օգուտին համար են, որ աշակերտէն  
համար մը լսած ատեննին՝ ուրիշ անոնց նման շատ հար-  
ցումներու վրայօք կրնան խորհիլ ու տղին հարցունել :

Աստղաբաշխութիւն սորվելուն գլխաւոր օգուտը աս է որ  
մեղ Աստուծոյ զարմանալի գործքերուն հետ ծանօթացընել  
կուտայ, ու մեղ իրմէն վախնալու ու ինքը պատուելու կա-  
ռաջնորդէ :

Ճամանակաւ մէկ իմաստուն մարդ մը շիտակ է զրուցեր  
թէ “Հիմար է ան աստղաբաշխը որ Աստուածպաշտութիւն  
չունի” :

# ԵՍՏԳԱԲԱԾԻՉԹԻՒՆ

---

ԵՐԱԾՈՒՅԻՆ :

Աստեղաբաշխութիւնը՝ Արեին, Լուսնին, Առողջականերուն, Աստղերուն, ու ուրիշ երկնաւոր մարմիններուն վրայօք կըխօսի : Աս մեր խօսելու հրաշալի բաները աղէկ մը հասկընալու համար . պէտք է որ անոնց վերաբերեալ մէկ քանի բառերուն նշանակութիւնը սորվիս . ինչու որ այս գըրքիս մէջը շատ անզամ անբառերը պիտի գործածենք : Ու պէտք է որ գնտակ մը ունենաս մէջը ծակած . ու մէջէն երկաթի թել մը անցուցած . ինձոր մը կամ նարինջ մը ըլլայ ալ նէ կըլլայ . բայց գնտակը փայտէ ըլլայ նէ շատ աղէկ կըլլայ . ինչու որ փորձանքի հանդիպելէն ազատ կըմնայ :

1. Աստղաբաշխույնը է՞նչ բանէ կըայ իւնունէ :  
2. Ամէն բան մեծ կամ պզտիկ՝ որ կլոր է, ինչպէս ինձորը, կամ նարինջը, գունտ կամ գնտակ կըսվին . ինտոր որ քու ձեռքդ ունեցած փայտէ գնտակդ, աւ

նանկ ալ երկիրը , որուն վրայ որ մենք կը բնակինք ,  
Լուսինը , Առողջակները ու Վահան , բոլորն ալ կը ըլլալուն համար գնտածե կը սվեն . այսինքն զունտի ձե  
ունեցող :

2. Խօնչ է Գուշակը :

3. Գնտակին մէջ տեղը կեղրոն կը սվե :


3. Խօնչ է Հետրոնը :

4. Առանցքը՝ գնտակի մը կեղրոնին մէջէն անցած  
գիծն է . ինչպէս որ երկաթի թելը գնտակիդ մէջէն  
կանցնի , ու երբոր ալ դարձունես , ան ատենը կը-  
վե թէ գունտը՝ իր առանցքին վրայ կը դառնակոր :

4. Խօնչ է առանցքը :

Հետու

5. Առանցքին ծայրե-  
րը ըստեռ կը սվեն . հե-  
մայ քու գնտակիդ ծայ-  
րերը Նիւսիս ու Նա-  
րաւ գրէ , ու անանկ  
ըունէ որ Նիւսիս ծայրը  
Նիւսիսին գայ , ու Նա-  
րաւ ծայրն ալ Նարաւ-  
ին . ու Նիւսիսին ծայ-  
րին Նիւսիսային ըստեռ



Հարաւ .

ըսէ ,ու չարաւային ծայրին չարաւային ըևեռ :

5. Եսանցին ծայրեռը ինպո՞ք իւնչն :

6. Հասարակածը՝ գունտին բոլորտիքը երկու ըևեռներուն միջոցէն հաւասար հեռաւորութիւնով քաշված զծին կրսվի . գնտակիդ բոլորը կապարէ զրիչով զիծ մը քաշէ , կամ դերձան մը բաթաէ վերի ըսած կերպովս , ու ան ատենը աղէկ մը կիմանաս հասարակածին ինչ ըլլալը :

6. Ի՞նչ է հասարակոծը :

7. Տրամադիծը շիտակ զիծ մըն է որ գունտին մէջէն կանցնի , ինչպէս որ երկաթի թել մը քու ձեռքի զընտակիդ մէջէն անցուցիր . կամ շիտակ զիծ մըն է , որ բոլորակի մը մէկ կողմէն մէկալ կողմը կըքաշվի կեղըոնին մէջէն անցնելով . ինչպէս որ վերի օրինակին մէջէն քաշված զիծերը :


7. Ի՞նչ է արագոծիծը :

8. Ըլջապատը գունտի մը կամ բոլորակի մը բոլորտիքին հեռաւորութիւնն է , ինչպէս հասարակածը գնտակիդ ըրջապատ եղաւ , ու ինչ զիծ որ գունտ մը հաւասարապէս երկու կըքաժնէ՝ ըրջապատ կըսվի . գունտի մը ըրջապատը դրեթէ իրեք անդամ իր տրամագիծէն մեծ է :

8. Ի՞նչ է շքջապատը :

(6)

360



9. Գիտես որ ինչևիցէ գունոի մը շրջապատը բոլորակ մըն է . զորօրինակ հասարակածը բոլորակ մըն է , ու ինչ զի՞ծ որ անոր պէս գունտին բոլորութեռ կը քաշվի բոլորակ մըն է : Եմէն բոլորակ 360 աստիճանի

կըքաժնըւի . բոլորակը մեծ թէ պղտիկ ըլլայ  
միշտ նոյն աստիճանին համրանքով կըքաժնուի ,  
բայց մեծ բոլորակին աստիճանները պղտիկ բոլորակին  
աստիճաններէն մեծ են : Ա երի օրինակին վրայ կը-  
տեսնաս ,! թէ մեծ բոլորակին մէկ մասը մէկիկ մէկիկ  
աստիճաններու բաժնած է . ու նաև երկու բոլորակնե-  
րն ալ կէսի ու քառորդի բաժնած : Բոլորակի մը  
քառորդը 90 աստիճան է , ու բոլորակի մը կէսը 180  
աստիճան . ու շատ անգամ ալ կիսաքոլորակ կըսվի :

9. Ո՞ե՞ս բոլորակի աստիճաններն են . աստիճան համար համար աս-  
տիճան . կեսաբոլորակի աստիճան . ամեն մէկ բոլորակի աս-  
տիճանները համապատճեն էն մը :

10. Երբեմն աստիճանները վայրկեանի կըքաժ-  
նեն . ու վայրկեաններն ալ մանրերկորդի : Ա աթ-  
սուն մանրերկորդը կընէ վայրկեան մը , ու վաթսուն  
վայրկեանն ալ կընէ աստիճան մը : Աստիճաններուն  
վրայ մէկ պղտիկ զրո մը կայ , ու վայրկեաններուն վր-  
այ մէկ շեշտ մը . ու մանրերկորդներուն վրայ ալ  
երկու շեշտ . ինչպէս  $10^{\circ} \cdot 12' \cdot 11''$  . յթ տասը աստի-  
ճան . տասվերկու վայրկեան , ու տասնըմէկ մանրերկ-  
որդ :

10. Բառնի հանրեւի բառեւ վայրկեան հը իւնիս . աստիճանի վայրկեանը  
աստիճանի մը իւնիս . աստիճանի աստիճանը բոլորակի մը իւնիս : Կարդա-

առ Եկեղեց . 20° . 14' . 17'' : Կլորդաշտ առ . 140° . 23' . 39'' :  
 11 . Դիտակը ան գործիքն է որ Արևին , Լուսինին ,  
 Առլորակներուն , ու ալ ամէն հեռաւոր բաներուն  
 նայելու կը գործածեն , որ հեռու եղած բաները մօտիկ  
 կերեցունէ : Շատ տեսակ դիտակներ կան , որոնք ա-  
 մէնն ալ անանկ ապակիներով շինած են որ հեռաւոր  
 բաները մօտիկ ու մեծ կը ցուցընեն . ասոնց օդնու-  
 թիւնով աղէկ կը նանք տեսնալ մեզմէ հեռու եղած  
 բաները :

11 . Խօնչ և գիտակը :

### ԳԼՈՒԽԸ . Ե :

Առաւ :

1 . Արևը մէկ մեծ գումար մըն է , ու մեր գիտցած ա-  
 մէն բանին ալ շատ մեծ է . երբոր առանց դիտակի  
 կը նայինք անոր , մեզի կերեայ թէ իլ տրամադիձը  
 մէկ կամ երկու ոտնաչափէն էվել չէ . բայց պատ-  
 ռական դիտակ մը մեզի շատ մեծ կերեցունէ անիկա :  
 Ես տեղաբաշխները անոր մեծութիւնը աղէկ մը հաս-  
 կը նալու համար մէկ քանի կանոն հնարեցին , ու իմա-

յան որ անոր տըամագիծը 860 հազար մղոնէն աւելի  
է : Արեւ երկրագունտէն միլիօն անգամ մեծ է :

1. Խօնը է Վրեւին յեւ : Ո՞չշտէ է եթ արամագիծը : Գառնուի հը<sup>1</sup>  
արամագիծը է՞նչ է : Վրեւ երկրագունտէն ո՞չշտէ մեծ է :

2. Արեւ պղտիկ կերեայ մեզի . ինչու որ մեղմէ շատ  
հեռու է : Գիտես որ ամէն բան որ մեղմէ հեռու է  
պղտիկ կերեայ : Տասը մղոն հեռու տուն մը հազիւ  
կրտեսնուի , ու քեզի մօտ եղած ճանձ մը՝ մղոն մը  
հեռու եղած եղէն , էվելի մեծ կերեայ : Վրեւ  
իբր թէ 95 միլիօն մղոն հեռու է երկրագունտէն  
ու եթէ մէկ թուչուն մը Վրեւին թուչելու ըլլայ , ու եր-  
կու մղոն երթայ մէկ վայրկեանը , 90 տարի պէտք է  
որ հոն հասնի :

2. Խնօնը Վրեւ մեղմ ապահովէն ինքնաց : ԱՌԵՆ, Վրեւին  
ո՞չշտէ հեռու էն : Վրեւի մը առանի ապահովէն ինքնաց հասնէն Վրեւին,  
ամէն մէկ զայրէնանը երկու մղոն երկաւուն :

3. Արեւ մեզի լոյս ու տաքութիւն կուտայ . ու  
կրնաս դիւրաւ իմանալ որ առանց արեւին մարդ չի  
կրնար ասլրիւ այս աշխարհքս :

Արեւ զՄատուած մեր միտքը կըքելէ , ինչու որ  
Արեգակն արդարութեան կըսվի ինքը . իր Ճշմարտու-  
թիւնը մեր մտաց լոյսն է , ու իր սէրն ալ մեր հոգուն  
կեանք կուտայ :

3. Առեւ Թովէ է՞նչ իս-դայ: Անոր նայելով Թով մատու ո՞վ  
իս-դայ:

4. ԱԵղի կերեայ թէ ամէն օր Վրեւը երկրագունտին  
բոլորտիքը կրդառնայ . բայց անանկ չէ . ասոր վր  
բայ ուրիշ զլիսու մէջ պիտի խօսինք սակայն Վրեւը  
իր առանցքին վրայ կրդառնայ քսանը հինգ ու կէս օ  
րը անգամ մը : Զեռքի զնտակդ անոր մէջը խօթած  
երկաթի թելին վրան դարձուր ու անառենը կիմանաս  
Վրեւին ինտոր դառնալը :

4. Առեւ երիբաժն-նորին բնուրտիւ իւդանայ մը : Ո՞վչո՞  
ժամանակի անգոյա յը իւդանայ իր առանցքին վըայ :

### ԳԼՈՒԽԸ. ԻՆ:


#### ԱՆԱՐԿԻՆԵՐԸ :

1. Կան տասնըմէկ մեծ գունտեր ալ որ Վրեւին բոլոր  
տիքը կըշըջին . որ կըսվին մոլորակ : Ու այս մեր երկ  
րագունտը՝ ոլուն վրայ որ մենք կըբնակինք , ան մոլո  
րակներուն մէկն է : Եւ անշուշո մէկալ մոլորակնե  
րըն ալ բնակիչներ ունին իրենց վրայ , ու անոնք ալ

կըվայելեն ան Վստուծոյն բազմապատիկ սլարդեները  
որ ամենուն Տէրն է :

1. Յանի հոլորիներ իտն : Խոշ է յեւենին : Անոլորիները  
է Արեն բոլորեւ իւշքն, Աւ Արեւ հոլորիներուն :

2. Առողջակներուն անունները ասոնք են . Փայլածու .  
Վրուսեակ . Երկիր . Հրատ . Ա եստայ . Ճ'ունօ .



Պալաս . Աեռէս . Լուսընթագ . Երևակ . ու Հերշէլ : Վրեմին ամենէն մօտը Փայլածուն է , ու ամենէն հեռուն ալ Հերշէլն է . մէկզմէկէ համեմատ հեռաւուրութիւնները օրինակին մէջը կըտեսնաս . մէջ տեղը Վրեզակն է , ու առջե փոքր բոլորակը Փայլածուն է , երկրորդը Վրուսեակ և այլն . բայց Երևակը ու Հերշէլը չե դրինք և Պալաս ու Աեռէս մէզմէկու շատ մօտ բլանուն մէկ բոլորակ մը ունին օրինակին մէջ :

2. Ո՞՞նք էն հոլորակները : Եռկրուժունունեն ու Երեխն հորակնեն հոլորակիայ : Ո՞՞նք է ամենէն հետուն :

3. Ան զիծը կամ շառաւիղը՝ ուրուն վրայէն որ մոլորակը կերթայ Վրեմին բոլորակը շրջելով . կըսվի ընթացք կամ շրջան մոլորակաց : Վոլորակ մը Վրեմին բոլորը միշտ նոյն հեռաւորութիւնով չի շրջել չի շրջել . հապա երթեմն կըմօտիկնայ ու երթեմն ալ կըհեռանայ . անոր համար շրջանը կըուշէ , ձուածէ . ինտոր որ կերեւայ օրինակիդ վրայ :

Բառը

Զարոյն

3. Ի՞նչ է հալըստին ընթացքը : Ո՞ւլըստինելուն ընթացքին յեւ ինտուր է : Ո՞ւլըստիւ միշտ Արևելու հաստատը հետառական լիւն է :

4. Ան միջոցը որ մոլորակ մը Վրեխին բոլորը կը շրջի Տարի կըսվի : Գիտես որ այս մեր երկրին վրայ տարին 365 օր է երբու ։ Կահանջ տարի չէ . ու 366 , երբու նահանջ է . նահանջ տարին չորս տարին անդամ մը կուգոյ . ինչու որ այս մեր երկրագունուը 365 օրը ու 6ժամը անդամ մը Վրեխին բոլորտիքը զաւնալով տարին կըկատարէ . ու ան 6 ժամը չորս տարին 24 ժամ կընէ որ է օր մը , անոր համար առ մէկ օրը չորսորդ տարվան կըդրվի ու չորսորդ տարին օր մը աւելի ունենալով այսինքն 366 օր ըլլալով ան տարին կըսվի ։ Կահանջ տարի : Քանի մը մոլորակներուն տարիները մեր տարիէն երկար են . բայց Փայլածուին ու Վրուսեակին տարին կարծ է :


4. Ի՞նչ է պարին : Ո՞ւել երեւէ պարին առնի՞օլ է : Ասհանջ պարին առնի՞օլ առնի՞ : Երեւածունու պարին առնի՞օլը առնի՞ ժամը առնածոյ իւ Արևելու բուշը իւշը : Ի՞նչ է նահանջ պարին : Ի՞նչ հալըստինել որ երկար պարին առնենան . առ ի՞նչ ալ որ իսկ իսկմ պարին առնի՞ :

5. Ան միջոցը որ երկրագունուը անդամ մը իր առանցքին վրայ կըդաւնայ , օր կըսվի : Ու մենք օրը

կէս զիշերուն կըսկըսինք ու 24 ժամու կըբաժնենք :  
Ո՞լոլակներուն շատերը կարծ միջոցի մէջ դառնալովնին իրենց օրը երկրագունուին օրէն կարծէ :

5. Օըլ է՞նչէ : Ո՞ւն օրը երբ իւն իւնին : Օըլ առնի՞ժամաբաժնուածէ : Ուրեւ յուղակիներուն օրերը եր օրին շո՛փէն մը :

6. Ա երը ըսինք թէ մոլոլակները ամէնը մէկ մեծութիւնով չեն . անոր համար այս պատկերը քեզի կըցուցնէ իրենց չափի ու մեծութիւննին համեմատու-



1 Երեսու

5 Երեսու և լուսին

2 Ներշեր

6 Ներտու

3 Փայլածու

7 Արունեալ

4 Լուսնալագ

7 Արունեալ

Թիւնը , և քովը դրած Թիւէրը մոլորակներուն անունները կըցուցընեն :

6. Ո՞րն է ամենէն մէծ հոլորակիւ : Ո՞ր հոլորակիւ էր Շուշը մէկ հանետի ունենէ : Վասնէ մոլորակիւներ կան ոչ Եղիշտագունդունուն մէծ էն :

Բայց մէկաւ մոլորակները պղտիկ ըլլալովնին չի դրինք . ու ան նշանները որ կըտեսնես մոլորակներէն քիչ մը հեռու դրված պէտք է որ ճանչնաս , ինչու որ օրացոյցի ու աստղաբաշխութեան գիրքերու մէջ մոլորակի անուն դնելու տեղը . աս նշանները կըզործածվի :

7. Առոլորակէն մէկ քանին պայծառ իրիկունները շատ անգամ կըտեսնըւին . հաստատ լոյս մը կուտան ու մէկաւ աստղերուն պէս չեն պըլպըլար , բայց շատ մարդիկ ասոնց զանազանութիւնը չեն որոշեր :

7. Ո՞րուրակիւները մէկ իւլիունուն ոչ : Ի՞նչու իւլիունուն :

8. Ասոնք բեկուեաւ աստղերուն պէս չըլլալնուն ու տեղերնին փոխելնուն համար , մոլորակ կըսվին այսինքն մոլորող աստղեր :

8. Խնչու- հոլորակիւն ասոնք :

ԳԵՂԱԽՈՅ. Գ.

Փայլածուն :

1. Հիմայ առ մոլորակներուն ամէն մեկին վրայօք  
յատուկ ծանօթութիւն մը տամ քեզի :

1. Վրեւին էն յօդ եղողը ո՞ր մուբանին է : Վրեւէն սրբուն հե-  
տուն է : Ո՞ւշը 37 օլլուն է էջ հետապնդութեանը :

Փայլածուն ամենէն մօտիկն է Վրեւին : Իրեն հե-  
ռաւորութիւնը Վրեւէն իրրե 37 միլիոն մղոն է : Վր-  
րեմն աւելի է ու երրեմն ալ սպակաս . բայց առ հա-  
սարակ այս վերոյիշեալ հաշիւն է իր հետառորութեան  
հաւասար կամ միջակ թիւը :

2. Փայլածուն իր առանցքին վրայ արեմուռքէն  
դէպ ՚ի արեւելք կըդառնայ 24 ժամը անդամը . ու 88  
օրը անդամը մըն ալ Վրեւին բոլորը կըշրջի :

2. Փայլածուն վրայ օրը առնի՞ ժամ է : « Բառնի՞ օրը առըն-  
հըն է : Ո՞ւշ առնի՞ ամսը կայլածուն դարձն է :

3. Փայլածուն միշտ Վրեւին շատ մօտ ըլլալով Վ-  
րեւին սաստիկ սպայծառութենէն մենք չենք կընար ան-  
տեսնել , բայց երրեմն Վրեւը մարք մոտած տունը կը-

տեսնըվի : Առողջակին Վրեւէն երկացած հեռաւորութիւնը, Տարածգութիւն կըսվի . այս բառու աղէկ միտքըդ պահէ : Աատդ տնկէ դէպ ’ի արեւելք , ու հիմայ կամաց կամաց վրայէդ դառձուր մինչև արեւմուտքը . ու եղաւ կիսաբոլորակ 180 աստիճան : Ու հիմայ ալ չորիզոնէն դէպ ’ի օքնիթը կամ շիտակ գլխէդ վեր մատդ երկնցուր որ կըլլոյ բոլորակին քառորդը որ է 90 աստիճան , ու չորիզոնէն մինչև օքնիթին կէս հեռաւորութիւնն ալ 45 աստիճան է : Վ.յո ըսածս անդիի տուած օրինակէս աղէկ կըհասկընաս . տես երես 6 :

Փայլածուն Վրեւէն 28 աստիճան հեռաւորութենէն աւելի բնաւ չերեւար : Ու այս է իր ամենէն մեծ Տարածգութիւնը , այսինքն  $28^{\circ}$  :

3. Փայլածուն շատ անգամ կը ունենալ չէ՞ : Ինչո՞ւ ոչ առեն կը ունենալ չէ : Անըլընին պարզոյդունենալ չէ՞ ոչ է : Վրեւէլքէն մինչև Վրեւէնուուր կամ հորեղունին մէկ իունին մէկու կոպը առենի՞ առաջնուն է : Հորեղունին մինչև օքնիկը ո՞չ չափէ հետապնդունենալ : Վեհոր իւս հետապնդունենալ ո՞չ չափէ է : Փայլածուն ամենէն մէծ պարզոյդունենալ ո՞չ չափէ է :

4. Աեղի կերեւայ թէ Վրեւը 24 ժամը անգամ մը մեր երկրագունոին բոլորտիքը կըշըջի : Ու ան մեզի երեցած ընթացքը՝ բոլորակ մըն է :

4. Վասնի ասպիճառու մեկ բալուանի մը իւնի : Արևու 24 ժամը  
ասոնի ասապիճառն իւնիւայ լւէ իւշըջէ : Ո եի ժամուն մեջը ասոնի աս-  
պիճառն : Խընու ժամուն մեջը ասոնի : Վասնի ժամ աղետու է որ 90 աս-  
պիճառն ուռալու տէ : Խընու Արև ծագելուն մը նշան մարդ հանուլը 12  
ժամ է նի , ան ասոնի լու Արևել ասոնի ասապիճառն իւնիւայ լւէ իւշըջէ :

Արևի միաժամ աղետն որ Արևելն ու Աստղովելուն Եւխութական  
շաբանու մեկ ժամուն մեջ 15 ասապիճառն է :

5. Փայլածուն շատ պղտիկ մոլորակ մըն է , ու երկ  
րազունտին 15 մասին մէկ մասին չափ մեծ է ու իր  
տրամազիծը 3000 մղոն է :

5. Փայլածուն Եւխութականուն շատ մէծ է մի : Ո շատ է եւ  
արամագիծը : Ո կարու է լւէ բացուրակի մը շքշապապը եւ արամագի-  
ծին որշատ մէծ իւլոյ : Անոնի է նի փայլածուն շքշապապը ո՞ր-  
շատ է :

6. Փայլածուն երկրազունտէն աւելի Արևելին մօտիկ  
ըլլալովը , կարելի է թէ ան տեղի կլիման էվելի տաք  
ըլլայ , բայց մենք աղեկ մը չենք զիտեր թէ այնչափ  
էվելի տաք է մի հոն մօտիկ ըլլալովը :

6. Ալիսը մի որ Փայլածունին զըսոյ մէր Խընութականուն  
ունել պատ ըլլոյ :

ԳԼՈՒԽԸ. Գ:

ԱՐԱԿԵՑՄԻ :

1. Արուսեակը մոլորակներուն ամենեն զեղեցիկն է .  
և շատ պայծառ ու պղինձի նման լուսով աղւոր աստղ  
մըն է : Անենք շատ անգամ կըտեսնենք այս աստղը առ-  
տուները Վրելը չե ծագած , ու կըսենք լուսաբեր ,  
այսինքն՝ լուս բերող . ու իրիկվրներն աւ Վրելը մա-  
րը մտնալէն ետև կերեայ , ու կըսենք զիշերավար  
այսինքն զիշերը բերող : Վսորէն մեծ տարածգութիւ-  
նը կամ Վրելէն երեսութական հեռաւորութիւնը  $47^{\circ}$  է :

1. ԱՐԱԿԵՑՄԻ ԵՐԿՐՈՅՆԵ ԷՆԴՐՈՇ է : ԱՐԴԻՇՆ շատ անգայ  
աւենալու :

2. Արուսեակը երկրադունտին չափ մեծ է . իր  
միջակ հեռաւորութիւնը Վրելէն 68 միլիոն մղոն է ,  
ու 24 ժամէն քիչ մը պակաս ատենին մէջ իր առանց-  
քին վրայ արեւմուտքէն դէպէ՞ի արեւելը կըդառնայ ան-  
գամ մը . ու մեր ամսովը 7 ամիս ու կէսը անգամ մը  
Վրելին բոլորտիքը կըշըջէ :

2. ԱՐԱԿԵՑՄԻ ԲԵՖԱ-ԼԻ-ՆԵ ՈՒՂՅԱՔ է . ո ւղյաք է եղ միջակ հե-  
ռաւութիւնը Վրելին : ԱՐԱԿԵՑՄԻ վրայ օդը առնի՞ ժամ է .  
առանի՞ ամիսը առողի հուն է հուն :

3. Արուսեակին դիտակով նայած ատեննիս մեզի  
տարբեր կերևայ . Արևը որ ասոր կէսին վրայ կը-  
ծագի , ան կէսին բոլորը չենք տեսնար , անոր համար  
երբեմն մեզի կլոր չերևար դիտակով : Ինտոր որ Առ-  
սինը մեզի կերպ կերպ կերևայ ատեն ատեն , անանկ  
ալ Արուսեակը մեզի կերևայ երբոք դիտակով կընայ-  
ինք անիկա . կըսուսամ թէ այս պատկերէն աղէկ մը  
կըհասկընաս :

. Ձե . Ն :



3. Արուսեակը ինդո՞ք իւրեայ երբոք դիտակով իւնային :

4. Աղեկ գիտնալու ես, թէ ո՞չ մոլորակները ու ո՞չ ալ  
լուսինը ինքիրէննուն լոյս կուտան : Երեւ անոնց վրան  
կըծագէ, ու իրենք ալ արևէն առած լոյսը մեզի կը-  
ցոլացունեն . զորօրինակ հայելի մը առ ու մո-  
մին առջին բռնէ, ու դարձուր հայելին դէպ'ի մէկալ  
սենեակը ու կըտեսնաս որ հայելին մէկալ սենեակին  
լոյս կուտայ . բայց հայելին ինքիրենը լոյս չի կընար  
տալ, հապա ան մոմէն առած լոյսն է որ կուտայ : Եւ  
սանկ ալ մոլորակները ու լուսինը իրենց արևէն առած  
լոյսը կուտան : Երեւ միայն լուսինին կամ մոլորակնե-  
րուն մէկ կողմին վրան ծագելովը անոնց մէկ կողմը կը-  
լուսաւորէ, ու մէկալ կողմը մութը կըմնայ . երբեմն  
ալ մենք ան լուսաւորած կողմին քիչ մասը կըտես-  
նանք . ու ան ատենը կըոր չերեար և քիչ լոյս կուտայ  
մեզի :

4. Երուածակին լոյսը երմէնէ : Ո-բէմն ո՞ւ-կէց է : Երեւ  
հոլորակներուն իտի ըստանին ամեն իոշմը իւ ըստառորէ՞ ՞ :

5. Ինչպէս զուարձալի է որ Եստուծոյ այս հրաշալի  
գործքերը սորվելովնիս մեր պարտքն ալ կըսորվինք :

Երեւ եբը թէ այս երկրին տէրն է . իր բոլորտի-  
քը շըջող գունտերուն ամենուն ալ լոյս կուտայ, ու  
անոնք ալ իրենց անկէց առած լոյսը դարձեալ մէ-

կըզմէկու կուտան : Ասանկ ալ բոլոր երկնի ու երկրի  
աշխարհքներուն Արարիչը՝ և անոնց վրայ իշխողը՝ մեր  
ու բոլոր իր զաւկըներուն միտքը իր անշէջ լուսովը  
կըլուսաւորէ , որ է ճշմարտութիւն . և ամեն մէկեր  
նուս ալ կըպահանջէ որ մեր առած լոյսն ալ ուրիշ  
ներուն տանք :

5. Ո՞շ իս-պայ հալուցոց հասոցը ըստը : Ի՞նչէ ան ըստը :  
Ի՞նչ իսպահանջէ ամեն հէիւդնուս :

6. Փայլածուն ու Ալուսեակը երբեմն ներքին կամ  
ստորին մոլորակներ կըսվին . ինչու որ անոնց շրջանը  
երկրագունտին ու արեին մէջ տեղն է . կամ Արեին  
շատ մօտ է : Ո՞է կալ մոլորակներուն շրջանը երկրա-  
գունտին շրջանէն դուրս ըլլալովը , կամ Արեէն շատ  
հեռու ըլլալնուն , կըսվին արտաքին կամ վերին մոլո-  
րակներ :

6. Ի՞նչ՝ Փայլածուն ու Ալուսեակը նէլուկն կամ ստորին  
մոլորակներ իւսվեն : Ի՞նչ իսպահանջ ո՞չ Արեէն շատ հէտու-  
ին :

# Գ. Ա. Ա. Խ. Խ. Ե.

Երևան հայ Երկրագունդ :

1. Երկիրը՝ որուն վրայ որ մենք կը բնակինք, անոր  
նայած ատեննիս մեզի գունտի մը պէս չերևար. բայց  
շատ մեծ ըլլալուն անոր շատ քիչ մասը կը նանք տես-  
նալ : Եթէ մէկ մըջեւն մը դրվելու ըլլար նարինջի  
մը վրայ, անոր ամէնը չի պիտի կը նար տեսնալ, բայց  
երկրի վրայի լեռներուն պէս նարինջին կեղեւին վրայի  
անհարթ մասերը միայն պիտի տեսնար : Բայց մենք  
գիտենք որ երկիրը գունտ է, ինչու որ շատ մարդիկ  
երկրին բոլորտիքը նաւով պըտըտեցան, ու եթէ դուն  
ալ նաւով մը 24000 մղոն շիտակ մէկ զծի մը վրայ եր-  
թալու որ ըլլաս դարձեալ նոյն տեղը կը հասնիս ուս-  
կից որ ելար : Իժէ որ երկիրը ուրիշ ձև որ ըլլալու  
ըլլար, դուն նոյն տեղը չէիր կը նար հասնիլ . ասկից  
ալ յայտնի է որ հեռուէն նաւ մը տեսնալու որ կը լ-  
լանք, առաջ կայմին ծայրը ու առագաստները կը-  
տեսնանք, ու քանի որ մօտենալու ըլլայ այնչափ անոր  
մարմինը կը տեսնանք . թէ որ երկիրը շիտակ ըլլար,  
առաջ նաւին մեծ մասը որն է նէ ան կը տեսնայինք, ու

պէտք էր որ կայմէն առաջ նաւին գողը տեսնայինք :

1. Ի՞նչ է Երևան Յեր : Ի՞նչու իւգեցու վէ ան իր  
առանցքին վրայ արևմուտքէն դէպի արևելք 24 ժա-  
մը անգամ մը կրդառնայ , որ օր մը կընէ . և տարին  
կամ 365 օրը անգամ մը արևին բոլորտիքը կըշըջի :

2. Երևէ առանցինք առնէ հզոն է : Ո՞ւշտէ է անոնց շք-  
զապատճեւ : Ան էր առանցքին վրայ ո՞ւ իոդին ո՞ւ իոդը իւտա-  
նայ : Ան էր առանցքին վրայ ո՞ւշտէ առենք իւտանայ : Եւ ո՞ւ-  
շտէ առենք Արեւին Բուլըրինք իւշքէ :

3. Աղէկ միտքդ պահէ որ աս Երկիրը գունտ մըն է .  
որ մոլորակներուն մէկն է . որ իր առանցքին վրայ ա-  
րեմուտքէն դէպի արևելք կրդառնայ . և որ իր մէկ  
անգամ դառցած ատենին կըսվի օր մը . նաև միտքդ  
պահէ որ Երկիրը արևին բոլորտիքը կըպըտըտի , և  
իր արևին բոլորտիքը մէկ անգամ պըտըտած ատենին  
կըսվի տարի մը :

3. Ո՞ւնա՞ւ էն ո՞ւ միտք առնէ ուսիւնելու էն :

4. Թէ որ բու զնտակդ արևին կամ կանթեղին դէմը  
բունելու ըլլաս , լոյսը անոր կէսը միայն պիտի լուսաւո-  
րէ ու մէկալ կողմը մութը պիտի մնայ . և թէ որ ան-  
միշտ լոյսին դիմացը դառցունելու ըլլաս , լոյսը անոր  
ամէն մէկ կողմը որ իր դէմը կուզայ պիտի լուսաւորէ ,

բայց չէ թէ անոր ամենը մէկտեղ : Ա. Ըստ ալ աս կերպով կը լուսաւորէ երկիրը՝ անոր դարձած ատենը : Խէ որ զնտակղ արևին կամ կանթեղին դէմք դարձուցած ատենը՝ անոր վրայ ճանձ մը կայնելու ըլլայ, իրեն պիտի երևայ՝ թէ լոյսն է որ արևելքէն դէպի արևմուտ կը դառնակոր . ասանկ ալ երկիրը արևմուտքէն դէպի արևելք դարձած ատենը մեզի պիտի երևայ թէ արևն է որ արևելքէն դէպի արևմուտ կը դառնակոր : Ա. սոր նման երբոր նաւակով կամ նաւով, կամ կառքով պինտ շուտ երթալու որ ըլլանք, պիտի տեսնանք որ ծառերը՝ տուները՝ և ամեն երևցած բաները՝ կը շարժին ետ կերթանկոր :

4. Ա. Եւ երիշեն ո՞րչո՞ւ հասկն ձըոյ իւծուգի : Խնչու մեռք իւրեայ՝ Ա. Եւ Եւ իւտանայ արեւելքէն դէպի արեւմուտք :  
5. Երկրի վրայ ինչ բան որ կայ՝ իրեն հետ կը դառնայ . նաև օդը ու ամպերը՝ որ մեր բոլորտիքը են, անոնք ալ երկրին հետ մէկտեղ կը դառնան : Ա. Բաներուն ամենը մեր հետը հանդարտ ու խաղաղ դառնալուն համար է որ մենք չենք իմանալ անոնց շարժիլը : Ա. սանկ ալ երբոր մեծ նաւի մը սենեակին մէջը նստիս, ու նաւը հանդարտութեամբ երթալու ըլլայ, դուն առ սենեակին մէջը բանի մը շարժիլը չես կընար տես-

Նալ : Բայց թէ որ դուքս ցամաքը եղած բաներուն  
նայիս նէ՞ պիտի տեսնաս որ անոնց առնը ետ ետ կեր-  
թանկոր . անանկ ալ երբոր արեին՝ լուսինին՝ կամ  
աստղերուն նայելու ըլլաս , պիտի երևայ քեզի՞ թէ  
անոնք ետ ետ կերթանկոր դէպի արեմուտք . ինչու  
որ անոնք երկրին հետ չեն դառնար :

5. Դառն՝ ու գունելլը՝ և ծառելլը՝ և Երիշի Ձբայ և նշան  
կան նէ , Երիշին հետը իւդատանո՞ւ մի : Խաչու առ Ըստներուն դատա-  
նուլը Թշու շնու Երևար : Խաչու Թշու իւլին Երևանու ըստակնը՝  
ու աստղելլը արեւելքն ունեղի արեւերուս իւդատանուն :

6. Մենք ալ օրը անգամ մը երկրին հետ կըդառնանք .  
թէ որ հասարակածին վրայ բնակած ըլլայինք , երկրի  
բոլոր շըջապատը պըտըտելու չափ մէկ օրը պիտի  
դառնայինք . բայց մենք հասարակածին ու հիւսիսայ-  
ին բեեւին մէջ տեղը կըբնակինք : Հիմայ թէ լ մը  
դերձանով գնտակիդ հասարակածին չափը ա՛ռ , ու ան-  
կից ետքը հասարակածին ու հիւսիսային բեեւին մէջ  
տեղն ալ չափէ , և իլարու հետ բաղկատէ , պիտի  
գտնաս որ ետքի չափդ առջենէն շատ պակաս է . նաև  
հասարակածին վրայ կէտ մը դիր ու մէկ ուրիշ կէտ  
մըն ալ ետքի չափած տեղիդ վրայ դիր ու գնտակիդ  
կամաց կամաց դարձուր . և պիտի տեսնաս որ ետքի

դրած նշանդ առ ջինին չափ հեռու գացած չէ . Ծէպէտ  
նոյն ատենը երկուքը մէկտեղ կըդառնան , բայց վեր-  
ջինը կամաց կըդառնայ : Աւստի ան մարդիկը՝ որ հա-  
սարակածին վրայ կըբնակին օրը 24,000 մղոն կըդառ-  
նան . բայց ուրիշ տեղ եղողները որչափ որ հասա-  
րակածէն հեռունան այնչափ պակաս կըդառնան մէկ  
օրը :

6. Պատճառ այլ հասարակածին վըայ Եղոնձ մարդոցը շատ է ու դաս-  
նան մի : Աստիք մէկ օր մասն մէջ ուշտէ իւ դասնան : Ինչ— դու-  
այնշտէ շէս դասնաը :

7. Հասարակածին վրայ ընակողները որ օրը 24,000  
մղոնի չափ կըդառնան պարտին մէկ ժամը քսանը ըստ  
մասին մէկ մասը դառնալ , որ կընէ 1000 մղոն : Եր-  
զուրումի և ուրիշ տեղերու մարդիկը՝ որ 40° , լայնու-  
թեան մէջ կըբնակին , 800 մղոն կըդառնան մէկ ժա-  
մին մէջ : Անդրիանուպօլսոյ և ուրիշ տեղերու մար-  
դիկը՝ որ 42° լայնութեան մէջ կըբնակին , 770 մղոնի  
չափ կըդառնան մէկ ժամին մէջ : Փետրը ուրկի և  
ուրիշ տեղերու մարդիկը՝ որ 60° , լայնութեան մէջ  
կըբնակին , 500 մղոն կըդառնան մէկ ժամին մէջ :

7. Հասարակածին վըայ բնակիոց մարդեկը՝ Երիքէ եւ առանձնայ-  
րէն վըայ դասնաը օրը ուշտէ իւ դասնան : Եւ ուշտէ մէկ  
ժամին : Ուշտէ իւ դասնան անոնք՝ որ 40° , լայնութեան մէջ  
իւ բնակին : Եւ անոնք՝ որ 42° : Ու անոնք՝ որ 60° :

8. Հիմայ դուն երկրի ինտոր էր առանցքին վրայ  
դառնալը որ կըհասկընաս , քիչ մըն ալ ուրիշ բա-  
ներու վրայ պիտի խօսինք :

## ԳԼՈՒԽԸ. Զ.

Լուսին :

1. **Տ**ասնըմէկ մոլորակները՝ որ յիշեցինք , գլխաւոր հո-  
լորուներ կըկոչվին . անոնցմէ մէկ քանիները պղտի  
տեսակ մոլորակներ ունին որ իրենց բոլորտիքը կըպը-  
տըտին , և անոնց հետ մէկտեղ արևեին բոլորտիքն ալ  
կըպըտըտին : Ասոնք Լուսիններ՝ երկրորդական մոլո-  
րակներ՝ կամ մոլորակներուն արբանեակները կըկոչ-  
վին : Փայլածուն ու Արուսեակը Լուսիններ չունին .  
բայց մեր երկիրը ունի մէկ հատ մը . ու մոլորակնե-  
րուն մէկ քանիներն ալ ունին քանի մը Լուսիններ :

1. Փայլածուն ու Արուսեակը Լուսիններ ունին մը : Երիեւ-  
առնի՞ Լուսիններն ունին : Կո՞յ ուրիշ հոլորուն մը մէկ հայտ Լու-  
սիններ ունենայ :

2. Ան գեղեցիկ Լուսինը՝ որ այնչափ զուարձալի ու

Հաճելի կերպով կը ծագի Երկրի վրայ, 240 հազար  
մղն հետու է մեզմէ: Առ 29ուկէս օրը անդամ մը Երկ-  
րին բոլորտիքը կը դառնայ. և նոյն ատենն ալ իր ա-  
ռանցքին վրայ անդամ մը կը դառնայ:

2. Առաջնորդ Երևեն ո՞ւշտէ հետու է: Ո՞ւշտէ առաջնոր-  
դ բոլորտէն իւղը ուշտէ Առաջնորդ: Ո՞ւ ո՞ւշտէ Երևա-  
նական ունէ Առաջնորդ Բեջը:

3. Առաջնի տրամադիթը 2000 մղնի չափ է. լուսինը  
գրղի ինչպէս կերևայ նէ, մեր Երկիրն ալ անանկ կե-  
րևայ լուսնի վրայ եղողներուն. միայն թէ հաւանակա-  
նաբար էվելի մեծ երևայ մեր Երկիրը:

3. Առաջնի Բժանելինու ո՞ւշտէ է: Առաջնի ՀՀ բնակչու-  
թանուն Բժք Երևանը ինչունույ:

4. Երբոր լուսինին նայինք դիտակով, ան խորտուքորու-  
կերևայ: Հետևեալ պատկերէն աղէկ կիմանաս Առ-  
սինին երեսյթը. ան կողմերը՝ որ խիստ լուսափայլ  
են, լուսինին բարձր տեղերը ու լեռները ըլլալ կը-  
կարծըլին. և ան կողմերը՝ որ մութ են, լուսինին ձո-  
րերը:

4. Առաջնորդ առ ըստապայծաւ դեղանու էնց ըլլալ  
իւղը վէն: Առ մութ դեղանու էնց ըլլալ իւղը վէն:

5. Առաջնին վրայ միայն քիչ օդ կայ, և հաւանա-  
կանաբար ջուր ալ քիչ կայ: Ո՞ւնք հոն չի պիտի



կընայինք ապրիլ, բայց անտարակոյս հեն քնակալներուն մէկ աղեկ աշխարհք մըն է ան :

5. Խուսինը բառահանութեան օրուան ջաւար սանէ՞ մը, որ հոն մէնս իս շատեա տպրիլ :

6. Աղեկ միտքդ պահելու ես որ Լուսինը իրքիրմէն  
լոյս չի տար, հապա արևեհն կառնէ լոյսը, ու մեզի  
կուտայ: Ասանկ ալ երկիրը արեգակն կառնէ լոյսը,  
ու նոյնը լուսինին և ուրիշ մոլորակներուն կուտայ:  
6. Լուսինը ինչը մէն լոյս կուտայ: Ու ունից իտոնէ եր  
բառ:

## ԳԼՈՒԽԻՒ. Ե:

—

1. Հիմայ սկսինք խօսիլ ան մոլորակներուն վրայով՝  
որ երկիրէն էվելի հեռու են արևեհն: Հրատը 144  
միլիոն մղոն հեռու է արևեհն, և մեր երկու տարիին  
քիչ մը պակաս ատենին մէջ արևեին բոլորտիքը կը-  
պըտըտի. ու 25 ժամը անգամ մըն ալ իր առանցքին  
վրայ կըդառնայ:

1. Երեկը մէ հետու և լուսինը լուսաւու: Նըստու ո՞ւ-  
շտէ հետու և լուսին: Նըստուին առընչն ո՞ւշտէ է: Ու ո՞ւ-  
շտուին մէջը առընչ ու ծնուժ ըլլուր նոյն առընչն ու ծն-  
ուժը նէ, մէսայ Նըստուին առընչն ըլլուր առնէ առընչն նոյն առընչը  
ըլլուր առնէին: Փայլաւուին առընչն ըլլուր ո՞ւշտէ առնէ ըլլուր:  
Նըստու օրը ո՞ւշտէ նոյն է մէջ օրնէն:

2. Հրատին տրամադիճը 4,300 մղոնի չափ է . ուստի  
ան մեր երկրագունդին իրեք բաժինին մէկ բաժինէն  
էվելի մեծ չէ . Հրատը մեզի որչափ մեծ կերևայ նէ ,  
կարելի է որ մեր երկիրն ալ անկից էվելի մեծ երևայ  
Հրատին վրայ բնակողներուն : Ի՞այց Հրատը ամենա-  
պայծառ մոլորակներուն մէկն է , ու կարմիր կրակի  
պէս զոյն մը ունենալուն համար Հրատ ըսվեցաւ որ  
կրակ ըսել է :


2. Հրատին Դժունելինը ո՞չընէ է : Ի՞նչուն իերեայ, Դ-  
նէ : Ե- էնչ- Հրատ իւսնէ :

3. Երբոր դիտակով աս մոլորակին նայինք , շատ  
զարմանալի բիծեր ու գերանի պէս բաներ կրնանք  
տեսնալ իր վրան , ինչպէս որ հետևեալ պատկերին  
մէջը կերևան : Ո՞ենք չենք գիտել թէ ի՞նչ է աս ե-  
րեցած բաներուն պատճառը , կարելի է որ ամպեր-  
ըլլան անոնք : Հրատը լուսին չունի :

3. Ի՞նչ պարագանել երեսոյնելն նշանակած էն հոռ : Ա-  
սոնց պատճառը է՞նչ է գիտե՞՞մ : Հրատը լուսին ունի՞ մի :

(33)

Չւ. Է:



ԳԼՈՒԽ. Բ:

Ա ՀԱՊԱՅ. ՃՐԱՆՈ. ՊԱՍՏԻ. Ա ՎԵՐԵ:

1. ՄԵՆՔ աս մոլորակներուն վրայով գլուխ մը բան  
պիտի խօսինք, ինչու որ քիչ զիտենք անոնց վրայով

քիչ ատեն է որ ասոնք գտնըվեցան . ու երբեմն ալ չըաշէկ , ճարեփառ չամասփիւռ , ու Ասկեհառ կըս-  
վին : Աեռեսը՝ 1801ին Փիացձա անունով մէկ պարոն մը  
դուռ , որ Սիկիլիա կղզիին Փալեռմօ մայրաքաղաքը  
կըրնակէր . Պալասը՝ 1802ին Գերմանիայի մէջ Պուե-  
մէն քաղաքը բնակող Տօքթը Օլպերս փիլիսոփան  
դուռ : Ճ'ունօն՝ 1804ին Պուեմէն քաղաքին մօտ բնա-  
կող պարոն չարտինկը դուռ . և Ա եստան ալ՝ 1807  
ին նոյն Տօքթը Օլպերս փիլիսոփան դուռ : Աս  
չորս մոլորակներն ալ շատ պլոտիկ են , և չենք դիտեր  
ալ թէ անոնք իրենց յատուկ լուսիններ ունի՞ն մի :

1. Երբ և ո՞վ գոտու Այեսեսը . Պալասը . Ճ'ունօն .  
Ա եստան : Ասոնք Բո՞ծ էն Ան ողբեկի : Ասոնք Լուսիններ ու-  
նի՞ն մի :

2. Ա եստան 223 միլիոն մղոնի չետու է արևէն .  
և 3 տարին ու 8 ամիաը անգամ մը արևէին բոլորտիքը  
կըդառնայ : Ո՞ենք չենք դիտեր թէ որչափ երկան է  
անոր օրը , ո՞չ ալ անոր տրամադիճին որչափ ըլլալը :

2. Ա եստան ո՞վչով հետու է Արեւէն : Անոնք առընչն ո՞վ-  
չով է : Անոնք օրը ո՞վչով երկայն է գերես՞ն մի :

3. Ճ'ունօն ձուաձև շրջան մը ունի . իր միջին չեւա-  
լորութիւնը , արևէն 253 միլիոն մղոն է . բայց երբե-

մըն ասկից էվելի է , և երբեմն ալ պակաս . և 4 տարին ու չորս ամիաը անգամ մը երկրագունդին բոլորտիքը կըդառնայ . և անոր օրը 27 ժամ ըլլալ կըկարձըվի :

3. **Ճ**առանուն միջնա հետապնդութեանը ո՞չչէ է Արեւելա : Ո՞չչէ արեւել իւդանայ Արեւելա բոլըդրիւ : Ո՞չչէ արեւել էր աստղագուշին զըսյ իւդանայ :

4. **Պ**ալասը երբեմն գրեթէ ուրիշ առենէն երկու անգամ էվելի հեռու է արևել . իր միջին հեռաւորութիւնը 263 միլիոն մղոնի չափ է . իր տարին՝ մեր 4 տարիին ու 7 ամիսին չափ է . մենք Պալասին ոչ մեծութիւնը գիտենք , ոչ ալ իր օրը որչափ երկան ըլլալը :

4. **Պ**ալասը Արեւելա ո՞չչէ հետապնդութեանը է : Ո՞չչտ միջնայն հետապնդութեանը մի իւդանայ : Պալասին առջին ո՞չչէ է :

5. Աեւեսը Պալասին չափ հեռու է արևել . և իր տարին ալ անորին չափ է , իր օրին երկարութիւնը ու իր մեծութիւնը տակաւին գիտցըված չեն :

5. Աեւեսը ո՞չչէ հետապնդութեանը է Արեւելա : Իւ առջին ո՞չչէ է :

## Գ Լ Շ Խ Խ Յ Յ Յ :

### Լ Հ Ա Ն Ա Ր Ա Դ :

1. Գանք հիմայ սլինտ մեծ մոլորակի մը վրայով խօսելու, որուն վրայ սլիտի կարողանանք էլլելի աղեկ ծաշնօթութիւն տալ, քան որչափ որ վերը յիշված չորս մոլորակներուն վրայ տրվինք: Կուսնթազին տրամազին ծը 89, 170 մղնի է. ու առ երկիրէն ալ 1400 անգամ մեծ է. և մեր գիտցած մոլորակներուն առենէն մեծն է ան:


1. Ո՞չտի է Լ Հ Ա Ն Ա Ր Ա Դ ին պատճառքէծը: Ո՞չտի է անոնց շահապատճառը: Ո՞չտի է անոնց մեծութեանը երկու մեծութեանը հետքադաշտելով:

2. Լ ուրնթազը 490 միլիոն մղնի հեռու է արեւէն. և ասանկ՝ մեր արեւէն ունեցած հեռաւորութենէն հինգ անգամ էլլելի հեռու է: Ես մոլորակը 12 տարին անգամ մը արևին բոլորտիքը կըպըտըտի. ու 10 ժամը անգամ մըն ալ իր առանցքին վրայ կըդառնոյ:

2. Լ Հ Ա Ն Ա Ր Ա Դ ո՞չտի հետու է առեւեն: Ի՞ր պատճէն ո՞չտի է: Ի՞ր օրը ո՞չտի է: Ո՞ւել 48 պատճէն: Լ Հ Ա Ն Ա Ր Ա Դ ին պատճէն ի՞ւնէ: Ե-96ը պահէ ի՞ւնէ: Լ Հ Ա Ն Ա Ր Ա Դ ին պահէ օրը մէջ պատճէն հաստատութեանը ի՞ւ-գոյ:

3. Եռամբազր գեղեցիկ լոյս մը կուտայ մեզի , և Առուսեակէն ՚ի զատ ուրիշ բոլոր մոլորակներէն շատ էվելի պայծառ է . ու անոր համար լուսնթագ ըսվեցաւ որ լուսով պատկված ու զարդարված է : Ուէ որ լուսնթագը արուսեակին չափ մօտ ըլլար մեզի , մեծ լուսինի մը պէս պիտի երեար մեզի : Արբոր դիտակով լուսընթագին նայելու ըլլանք , գերաններով զոցված կերեայ , որ առեն առեն տեղերնուն կըշարժին ու ձևերնին կամ երեսյթնին կըփոխին : Աւ շատ զարմանալի բիծեր աւ կըտեսնըլին իր վրայ . որ աս պատկերին վրայ կերեան :

Չւ. ը :



3. Ասանթագիւն ըցուլ է՞նչպէս ե: Ի՞նչպէս ողիուն երկար,  
ըէս ո՞վ Աշուածակին չտի մօռ ըլլու: Ի՞նչպէս իւրեայ դեռակիւն:  
4. Հիմայ բան մը պիտի ըսեմ՝ որ շատ զարմանալի  
է, Կուսնթագը չորս լուսին կամ արքանեակ ունի. որ  
իր բոլորտիքը կըպըտըտին, ինչպէս որ մեր լուսինը  
երկրի բոլորտիքը կըպըտըտի: Վնոր լուսիններուն մէկ  
քանիները մեր լուսինէն պզոտիկ են, և մէկ քանիներն  
ալ մերինէն շատ մեծ են: Վսոնք տարբեր հեռաւու-  
րութիւն ունին լուսնթագէն, ու իր բոլորտիքը այլ և  
այլ ատեն կըպըտըտին: Վնոնցմէ մէկը մեր օրովը եր-  
կու օրը անգամ մը կըպըտըտի, ու անոնցմէ մեր 17 օ-  
րէն էվելի պըտըտող մէկը չի կայ. կըյիշէք որ մեր  
լուսինը 29½ օրը կըպըտըտի երկրի բոլորտիքը:

4. Ասանթագը ստոնի՞ ըստին ստի: Անոնց Աժա-Ակենը  
սովորէն ե: Եթ-սովորէն ստունը ստոնթագին չուլլուիւ-  
իւրջնին:

5. Կուսնթագին ամէն կողմի բնակիչները հազեւ թէ  
կընան կամ բնաւ չեն կընար տեսնալ լուսնթագին չորս  
լուսինն ալ մէկէն, բայց շատ անգամ երկուքը կամ  
երեքը մէկտեղ կըտեսնան: Վս մոլորակը 10 ժամը  
անգամ մը իր առանցքին վրայ դառնալուն համար,  
ան տեղի օրերը ու գիշերները շատ կարծէն. և ոչ ա-

ըւը ոչ ալ լուսին մը կրնայ շատ ատեն հեռու մնալ .  
թէ որ տեսնալու ըլլայինք աս բիծերը և լուսինները ,  
ինչպէս Լուսնթագին բնակիչները կըտեսնան , ինչպէս  
պիտի զարմանայինք :

5. Լուսնագին շըս ըստիններն ալ մեխեղ իւսեանը վէճ  
դ շատ անդժամ : Երշաց հետո իւմ նուն մէ :

6. Հաւանական չէ որ լուսնթագին վրայի բնակիչները  
Փայլածուն , Վրուսեակը , Երկրագունուր , կամ  
Նրատը տեսնան . քանզի ինչպէս որ Փայլածուն արեւին  
մօտ ըլլալուն չերեար մեզի անանկ ալ աս մոլորակները  
արեւին մօտ ըլլալնուն չի պիտի երեան Լուսընթագին բնակիչներուն . ինչու որ արեւին լոյսին պայծառութիւնը չի թողուր անոնք՝ որ տեսնըլին : Աս մոլորակները որ Նրատէն դուրս են , լուսնթագէն կրնան  
տեսնըլիլ , և գուցէ ուրիշներն ալ կրտեսնըլին անկից ,  
որ անոնց վրայով մենք աս երկրի բնակիչներս  
բան մը չենք զիտեր :

6. Ո՞ր մոլորակները են՝ ո՞ր հաւանականը ըստինագին  
չէն չեն երեալը : Խանչ՝ չեն անոնը վէր : Ո՞ր մոլորակները մը տառը անունը ո՞չ չեն : Ո՞ր մոլորակները ըստինագին իւրիւնը վէր :

## ԳԼՈՒԽԸ. Ժ:

ԵՐԵՎԱՆ :


1. ՄԵԿ ուրիշ զարմանալի մոլորակ մըն ալ Երևակն է . որ ուրիշ մոլորակներէն մեծ է՝ բաց ՚ի լուսլնթագէն . իր տրամագիծը 79,000 մղոն է , և մեր երկրագունդէն 1000 անգամ մեծ է :

1. Ո՞րչոք է Երեւանին արտահանելու : Ո՞րչոք է անո՞ր շքշողաց : Ան առ Երևան ո՞րչոք մէծ է :

2. Երևակը 900 միլիոն մղոն հետու է արևելք , և 30 տարին անգամ մը արևելք բոլորտիքը կըդառնայ . և 10 ժամը անգամ մըն ալ իր առանցքին վրայ կըդառնայ :

2: Երեւան ո՞րչոք հետու է արևելք . Երևանի ո՞րչոք մէծ է . իր առարին ո՞րչոք է . և իր օրը ո՞րչոք :

3. Երբոր դիտակով նայելու ըլլանք , կերևայ թէ Երևակը երկու բոլորակով պատաժ է . ու մէկ բոլորակը մէկալին մէջը ըլլալ կըթրւի , և անոնց մէջտեղը նըշանաւոր միջոց մը կայ . դռն էվելի աղէկ կընաս հասկընար աս պատկերէն :



3. Խոչ է Երեսակին բուռնիները :

4. Աս զարմանալի մոլորակը եօթը լուսին ունի, որ  
տարբեր ատենի մէջ կըդառնան իր բոլորտիքը, 1օրէն  
մինչև 80 օր զանազանութիւն ունենալով : Աս լուսին  
ները և պայծառ բոլորակները հաւանական է որ Ե-  
րեսակին գիշերները շատ լուսաւոր ու զուարժալի կը-  
նեն :

4. Երեսականի՞ ըստան ունի: Ո՞րչոք առենու իւշըն էր  
բուռնիները: Ինչո՞ւ Երեսակին գլցերները զուարժալի է:

ԳԼՈՒԽԸ. ԺԵ:

ՆԵՐՉԵԼ ԽԱՅ Ա ԵՐԵՎԱՆԻ :

1. Եւրոպայի բնակիչները հասարակօրէն Ա ԵՐԵՎԱՆԻ  
կրկոչեն աս մոլորակը . բայց Վնդղեայի և Վմերիգայի  
մէջ էվելի հասարակ է ՆԵՐՉԵԼ կոչել ան : Վս մոլո-  
րակը 1781ին Վնդղեացի Տօքթը ՆԵՐՉԵԼը զտաւ . ու-  
րիշ քանի մը հոգիներ ալ տեսան ան առաջուց , բայց  
հաստատուն աստղ մը ըլլալ կարծեցին ան :

1. ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԽՈՍՔԱԿԱՐԱՆ : Ա-ԵՐԵՎԱՆԻ ԷՌԱՆ Ա-Ե-  
ՎԱՆԻ ԽՈՍՔԱԿԱՐԱՆ :

2. ՎԱՄԷՆ մեր տեսած մոլորակներէն էվելի շատ հե-  
ռու է ՆԵՐՉԵԼը արեէն . իր հեռաւորութիւնը 1800  
միլիոն է , որ Վրեակին հեռաւորութեանը երկուքին  
չափ է , և աս երկրին հեռաւորութենէն տասնըինը  
անդամ էվելի հեռու է :

2. ՆԵՐՉԵԼ ՈՒՂՅԱՆ ՀԵՄԱՆ Ե ԱՐԵՒԵՆ : ԼԵՐԻ ԽՈՍՔԱԿԱՐԱՆ ԷՎԵԼ ՈՒ-  
ՂՅԱՆ ՀԵՄԱՆ : ԼԵ- ԼԵՐԻ ԽՈՍՔԱԿԱՐԱՆ ԷՎԵԼ ՈՒՂՅԱՆ ՀԵՄԱՆ :

3. ՎՍ ՀԵՌԱՎՈՐ ՄՈԼՈՐԱԿ 84 տարին անդամ մը ա-  
րեէն բոլորտիքը կըդառնայ . թէ որ իր բնակիչները  
մեր երկրի բնակիչներէն էվելի չապրին նէ , անոնցմէ

քիչը մէկ տարեկանի շափ պիտի ըլլան իրենց տարի-  
ովը . անոնց օրին երկարութիւնը չի դիտցրված է :

3. Ներշնչեան մէջ առաջին ո՞չը է :

4. Հերշելին տրամագիծը 35,000 մղոն է . ուստի մե-  
ծութեան կողմանէ մեծ մոլորակներուն երրորդն է , և  
առ երկիրէն 90 անդամ մեծ է : Ա եց լուսին Հերշելին  
բոլորտիքը կըպըտըտի , բայց այնշափ հեռու են մենէ .  
որ իրենց վրայով քիչ բան դիտենք :

4. Ո՞րշնչ է Ա Հերշելինուն : Ա մինչ մէջ առաջ մեծ հու-  
րակիներ կան : Ներշնչը առաջ լուսին առնէ :

5. Հերշելը արևէն շատ հեռու ըլլալովը մենք պիտի  
կարծենք թէ պէտք է որ հոն շատ մութ ու ցուրտ ըլ-  
լայ . բայց ան տեղի բնակիչները կարելի որ էվելի  
տաքութիւն ու լոյս ընդունեն արևէն , քան որչափ որ  
մենք կըկարծենք . կարելի է որ էվելի միջոցներ ունին  
տաքնալու : Կարելի է որ անանկ սրատես է իրենց  
աչքերնին՝ որ մեր չի կըցած տեղը կամ բանը իրենք  
տեսնան , և մենէ ալ էվելի ցուրտի դիմացկոտ ըլլան :  
Վսոր օրինակ , կան կենդանիներ՝ որ քիչ մը լոյս եղած  
տեղը էվելի աղէկ կըտեսնան , և կան ալ որ միայն  
ցուրտ տեղերը կըքնակին . կան նաև խոտեր որ ցուրտ  
տեղուանքը կըքումնին , ու թէ որ տաք տեղ տնկելու

ըլլաս չեն բումնիր , և կան ուրիշներն ալ՝ որ ցուրտի  
չեն դիմանար : Ծնիկս որ ամեն բաներուն Ատեղծողը  
և սլահպանողն է , իր առատ ողորմութեամբը անոնց  
ամեն մեկը իր սահմանած կլիմաներուն ու իր ուզած  
գրիծածութեանը կերպին կը յարմարէ անոնք :

5. Ասո՞յէ և մի ո՞ւ Ներշեշնեն իշխան շատ ցուշուն է , և ո՞ւ անոնք  
բնակիչները ո՞ւ ըստ առնեն : Ասո՞ն իշխաննեն ո՞ւ նորուն ո՞ւ պա-  
նական պատ ու ցուշուն առաջինուններուն իւրաքանչին :

6. Հիմայ բոլոր մեր զիտցած մոլորակներուն վրայ  
խօսեցանք . բայց կարելի է թի կան ուրիշ մոլորակներ  
ալ որ շատ պղտիկ կամ հետու ըլլալնուն համար , մենք  
չենք կրնար տեսնալ անոնք մեր զիտակովը : Նիմակ  
վան մեր զիտցած մոլորակներուն հինգը 1780 էն հետէ  
զտնվեցան . և թէ որ օրէ օր զիտութիւնը ծաղկելով  
ուրիշ էվելի պատռական զիտակներ ալ հնարվին նէ ,  
կարելի որ ուրիշ մոլորակներ ալ զտնրվին :

6. Ասո՞յէ և մի ո՞ւ ասանայթէ ‘Ե պատուալի չէ պատուալ  
արևոնն բոլորունք : 1780 էն հետէ առնի՞ հար գործութիւնն : Կը-  
նա՞ս մի ըսել լի այսոնք էն անոնք :


## ԳԼՈՒԽ. ԺԲ:

Գիշատուց առաջը :

1. Արեին բոլորիքը պըտըող ուրիշ մարմիններու կարգ մը կայ, որ մոլորակներէն շատ տարբեր կերեայ . անոնք երբեմն արեին շատ մօտ կուզան, և երկար ատեն ալ մեզի կըտեսնըվին . և յետոյ այնչափ կըհեռանան, որ ամենէն աղէկ դիտակով ալ նոյելու ըլլանք, չի պիտի տեսնանք շատ տարի : Ասոնք մոլորակի մը կամ աստղի մը նման կերեան, միայն թէ պայծառ պոչ մը ունին որ իրենց ետենուն կերկննայ ու շատ հեռուն կըտարածի : Աս զարմանալի մարմինները Գիսաւոր աստղեր կըկոչվին . ինչու որ իրենց լոյսը մազի պէս կերեայ : Հետեւեալ պատկերին մէջը կըտեսն սս ան Գիսաւոր աստղը՝ որ 1811ին երեցաւ . իր պոչը շատ երկան էր՝ որչափ որ հոս կերեայ :

1. Գիշատուց առաջը բնաւայն իլլօդինա՞ն մի : Անոնք մշտ իլլօդն ալ մի : Անոնք ի՞նչորդն իլլուստրացիոն մի :

2. Թէպէտ Գիսաւոր աստղերը ընդհանրապէս պղտիկ աստղերու նման կերեան, բայց մէկ քանիները տես-



Նըլեցան որ լուսինին չափ մեծ էին : Ուեկ քանի գիւ

սաւորները կարծ պոչ ունեին , և քիչ լոյս կուտան , բայց ուրիշները շօրիզնեն մինչեւ օէնիթը եղած հեռաւորութեանը չափ կամ 90 աստիճան կըտարածեն իրենց պոչերը , և պղտի լուսինի մը չափ լոյս կուտան մեղի : Իրենց երեսյթին մեջը եղած առ տարբերութիւնը երբեմն իրենց հեռաւորութենէն առաջ կուգայ :

2. Ավշակ մէծ եւեցաւ Գ. Հաստար ասուղ 5ը : Անոնց պոչ ավշակ հետու կըդառնածէ :

3. Գիտաւոր աստղերուն վրայ մոլորակներուն չափ բաւական տեղեկութիւն չունինք , որ աղեկ մը պատմենք ձեղի : Վիայն քանի մը հատ և անոնք ալ շար մեծ չեն որ երեցան , քանի որ աստղաբաշխները աղեկ զիտակներ ունեցան և ասանեկ մարմիններուն շրջանը , հեռաւորութիւնը , ու մեծութիւնը ինչպէս հաշուելը լաւ հասկըցան : Տրվիտոսի ժամանակէն մինչեւ հիմայ 500ը չափ զիտաւոր աստղեր տեսնըլից ցան , բայց անոնցմէ միայն երկուքին շրջանը զիտցը վեցաւ , և չիյտենք մեծերը երբ պիտի տեսնըլին նորէն :

3. Խնչ՝ առէի անզէիւնն չեն իրնորդ ասու Գ. Հաստար ասուլընուն ձևացով : 1800 տարվան մէջ առնէ Հաստ անսնը միշտան : Անոնց ընթացք գիշոցը մը է մը :

4. Ամենէն աղեկ ճանչցրված գիսաւոր աստղը Խնք  
կըկոչվի . ինչու որ անոր շրջանը ճշդիւ հաշուողը  
Դերմանացի Խնք Ա արժապետն էր : Աս զատ պղտիկ  
գիսաւոր աստղ մըն է , և 1200 օրը անդամմը արևին  
բոլորտիքը կըդառնայ : Աս Փայլածուէն էվելի արևին  
կըմօտիկնայ , ու Սերեսէն ալ էվելի արևէն կըհեռու  
նայ , և բնաւ մեծ չերեար մեղի :

4. Արէն ճանչցը մը գիսաւոր աստղն է : Ո՞ւշտի առնենը  
ի՞ւ գոտունայ արևէն բոլորտիքը : Ո՞ւշտի ի՞ւ գոտիկնայ արևէն : Ե-  
՞ւշտի ի՞ւ հետառնայ արևէն : Բնաւ մէն ի՞ւ ընալոյ ի՞ւ :

5. Չորս հարիւր տարիի չափ չի կայ որ գիսաւոր  
աստղերը խիստ մեծ ահ ու դողով կընկառվէին , ին-  
չու որ անոնք ահազին տառապանքնելու առաջնորդ-  
ներ կըկարծըվէին . բայց մենք հիմայ կընկառենք ա-  
նոնք առանց երկիւղի , և Աստուծոյ ստեղծած բարի  
բաներուն կարգը կըդասենք անոնք : Կարելի է որ մո-  
լորակներուն պէս իրենք ալ բնակիչներ ունենան , բայց  
թէ որ չունին ալ նէ , չենք կընար տարակուսիլ՝ թէ  
անոնք օգտակար ըրլան . քանզի ի՞նչ որ Տէրը ստեղ-  
ծեց նէ , օդուտ ընելու համար ստեղծեց :

5. Հին առնենը Գանառու առաղելը է՞նչպէս ի՞ւնիտավէն :  
Նեմայ է՞նչպէս ի՞ւնիտավէն : Աս դուռը բոլոր բաները ի՞նչո՞ւ հա-  
մար ստեղծեց :

## ԳԼՈՒԽԸ ԺԳ

### ԱՐԵՎԻՆՅԱԿ :

1. ԱՐԵՎԻՆՅԱԿ ԱՐԵՎԻՆՅԱԿ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԵՆ՝ որ  
մթնոլորտին մէջէն նետի մը պէս կանցնին կամ աստ  
ղի մը պէս երևնալով կըթռչին : Ասոնք չեն երևար  
թէ մոլորակներուն կամ գիսաւոր աստղերուն պէս շըր  
ջանով կըդաւնան արեին բոլորտիքը , հապա ասղին  
անղին կըթռչին : Ասոնցմէ մէկ քանիները շատ անգամ  
շուտով շարժըված ու իրենց ետևնուն երկան պոչ մը  
ձգած կըտեսնըլին , որ ասոնց համար տղետները կը-  
սեն թէ մէկ ասող մը ինկաւ :

1. Ի՞նչ է ԱՐԵՎԻՆՅԱԿ ԱՐԵՎ : Ասոնք իտեսնաւոր ընթացառ  
իւրառնան Ք : Տէկ առեւ ի՞նչ իւրչեն ասոնք :

2. ԱՐԵՎԻՆՅԱԿ ԱՐԵՎԻՆՅԱԿ ՕՐԻՆ աստղէ մը էվելի  
մեծ չեն երևար . բայց մէկ քանիները արեին չափ  
մեծ ու լուսինէն էվելի պայծաւ տեսնըվեցան : Ասոնց  
մէ շատերը մէկ հիանալի արագութիւնով մը կըթռ-  
չին . բայց ուրիշները կամաց կըշարժին :

2. ԱՐԵՎԻՆՅԱԿ ԱՐԵՎԻՆՅԱԿ ՕՐԻՆ :

3. ԱՐԵՎԻՆՔ ընդհանրապէս կարող չենք աս մարմիննե-

լուն մեզմէ հեռաւորութեանը վրայով հաւանակոն տեղեկութիւն տալու . ինչու որ շատ անզամ մեզի ալ մեզմէ հարիւրաւոր մղոն հեռու եղող մարդոցն ալ նոյն ձևով երեցաւ ան նոյն Վ'ետէորան : Աս կը ցուցընէ որ անոնք որչափ հեռու կերեան նէ , անկէց ալ էվելի հեռու են :

3. Վ'ետէորաներուն Հետապութեանը Ձբայովէն էն իւն :

4 . Աակայն այսու ամենայնիւ , երբեմն ալ զննելով տեսնըվեցաւ որ անոնք այնչափ մօտ կանցեէին որ իւրեաց օղին մէջէն շուտով անցած ատեննին բղղ ձայն հանելնին կը լսվէր : Ոմանց ալ ահազին ձայնով պայթիլը լսվեցաւ , և անոնցմէ քարեր գետինը իյնալը տեսնըվեցաւ : 1807ին մէկը տեսնըվեցաւ Վ'երիգայի մէկ քաղաքին վրայէն անցնելով , որ արեին չափ մեծ ու շատ պայծառ երեցաւ . որ մեծ հնչումով պայթեցաւ ու անկէց մեծ քարեր վար գետինը ինեկաւ : Ըսլոր անկէց ինեկած քարերը որ դանըվեցաւ՝ զրեթէ ամենը մէկ տեղ 300 լիոր ծանրութիւն ունեին . որ առ երկրին մէջը զանըված ամեն տեսակ քարերէն տարբեր էին անոնք , ու ինեկած ատեննին տաք էին : Ուրիշ տեղեր ալ տանեկ զիսլուածներ եղած են :

4. Բանաւ ԱՌԵՎԵՆԵՐՈՒՆԵՐԸ հօդին ամենը վէցա՞ն մէ : Ա-  
նոնց եւ եւ ի՞նչ իւղագունքն է : Ի՞նչուն ամենը վէցա՞ն 1807  
ին եւեցած ԱՌԵՎԵՆԵՐՈՒՆ :

5. Ինչեիցէ , չի կալծըվիր որ բոլոր ԱՌԵՄԵՌԱՆԵՐԸ  
քարտվ բաղադրած են , վերջապէս անոնց վրայով շատ  
չենք զիտեր : Եւ բոլորովին տղէտ ենք՝ թէ ինչպէս  
կըպատահի որ երկրէն՝ ի վեր օդին մէջը ասանկ քա-  
րեր կըդոներվին ու ասդին անդին կըշարժըվին : Ո՞ւնք  
ոչ անոնց ինչու համար տաք ըլլալնին զիտենք , ոչ ալ  
անոնց ինչու համար այսչափ լուսաւոր ըլլալնին զի-  
տենք :

5. Ծառը ԱՌԵՎԵՆԵՐՈՒՆԵՐԸ ժամանելով սպառ իւ-  
խոճանքն մէ : Գերացը վլո՞ծ է մէ լու էնցուն իւգոյանն :

6. 1779 ին արևելքին կողմի երկինքին երեսը շատ  
զարմանալի երեսյթ մը եղաւ ԱՌԵՄԵՌԱՆԵՐՈՒ : Հա-  
զարաւոր և հաւանականաբար միլիոնաւոր ԱՌԵՄԵՌԱ-  
ՆԵՐ տեսներվեցան չորս ժամին միջոցը . և անոնց մէկ  
քանին արևելն երկու անգամ մեծ ըլլալ երևցան : Ա-  
նոնք հարաւային Վամերիզայէն , Վապրարէն , Քրէն-  
լանտիայէն , ու Գերմանիայէն ալ զննըվեցան . անոնք  
շատ բարձր ու շատ մեծ եղած պիտի ըլլային , որ նոյն  
տեսնը մէկզմէկէ շատ հեռու ուրիշ տեղերէ ալ տես-

Նըվեցան , և աս նոյն դիպուածը մօտ տարիներս ալ  
երեցաւ :

6. 1779 էն Երևանին Երեւան է՞նչ առանց վեցաւ :

## ԳԼՈՒԽԸ ԺԴ

Հայութագութեան իամբ բնելուական առաջնորդը :

1. Մինչև հիմայ մենք Վրեխն , Մոլորակներուն ,  
Լուսիններուն , Կիսաւոր աստղերուն , ու Մէտէորա-  
ներուն վրայ խօսեցանք . մենք աս զրութեան կենդրո-  
նը կըկոչենք Վրեխ . և բոլոր մէկալ գունտերը՝ որոնց  
վրայ որ խօսեցանք , Վրեխն բոլորտիքը կըդառնան , ու  
անկէց կախումունի իրենց լոյսը և տաքութիւնը : Վ.  
սանկ Վրեժականայէն Դարս-Շետանը վրայ որ կըխօսինք , ի-  
մացունել կուզենք Վրեխ ու ան ամէն գունտերը՝ որ իր  
բոլորտիքը կըդառնան :

1. Է՞նչ սանել է Վրեժականայէն Դարս-Շետան : Ալս՞ո՞ն , էն-  
չը աս Դարս-Շետանը իւ վշտագէրէն :

2. Երկինքին մէջը ուրիշ գունտեր ալ կան որ աս  
Դրութենէն չեն . ան պլազմացող մարմիններուն

շատերը՝ որոնք որ դուն պայծառ դիշերները կըտեսնա , շատատուն Վատղեր կըկոչվին : Ունք անոնք հաստատուն կըկոչենք անոլ համար որ իրօք շարժումմը չունին որ մենք կարենանք իմացունել : Աս Վատղերն ալ անկատկած արևեներ են ուրիշ գրութիւններու , այսինքն անոնք ալ արևին պէս են ու մոլորակներ ունին որ իրենց բոլորոիքը կըդաւնան :

2. Խնչուանուն հաստատուն Վատղեր իւնչուն : Եւ չուլուն իւնչուն :

3. Երբոր պայծառ իրիկուն մը աստղերուն նայելու ըլլաս նէ , պիտի կարծես թէ անոնք անթիւ են , բայց կարծածէդ շատ քիչ են : Վասնց վեր ՚ի վերոյ նայելու է պատճառը որ քեզի անանկ բավարաթիւ կերեան . բայց խիստ պայծառ գիշերն ալ թէ որ առանց դիտակի նայելու ըլլաս նէ , անոնցմէ 1000 հատէն էվելի չես տեսնար :

3. Ուելանգունուն անչու ասպող իրնուս պէսանու աստանց գէտանի : Խնչուանուն անչու սլուն իւնչուն :

4. Երբոր դիտակով նայելու ըլլանք , շատ շատատուն աստղեր կընանք տեսնալ , որ ուրիշ կերպով չեն տեսնըվեր . բայց անոնց ամէնն ալ այնչափ շատ հեռու են որ դիտակին զօրութիւնը չի հասնիր անոնց որ մօտիկցունէ ու էվելի մեծ երեցունէ անոնք , ինչպէս

մոլորակները կընէ : Օմէ որ անոնք մեր երկրագունոտէն 200 հազար անդամ էվելի արևէն հետու ըրլային նէ , մենք պիտի կընայինք անոնց հետաւորութիւնը հաշուել , բայց հիմոյ չենք կընար հաշուել :

4. Ուրեմն առաջնորդ աւ իշխան, մը աւստալ տէրութիւնը , առաջնորդութիւն նոյն էլեւ էլեւ : Դեմուսէ աւ իշխան մը հօգուիցաւնել անոն , ու մեծացունել էնցուն հուշահաները իւնէ : Ենան , արևոտնու ընչափ հետու սլայէն նէ , մենք անոնց հետաւորութիւնը իշխայէն , հաշուել :

5. Մենք շատ անդամ երկինքին երեսը մեկ լայնատարած կամար մը կըտեսնանք , որ շիւսիսային արևելքէն դէպի հարաւային արևմուտքը կըտարածվի , որ Ճերմակ ամպի մը պէս կերեայ , և անթիւ պղտիկ աստղերով աւ լեցուն ըլլալ կերեայ :

Աս կամարը Յարդպող կըսվի կամ չետք Յարդպողի : Ինչպէս որ առասպելաբանները Ա ահազնայ շայոց թագաւորին վրայով կըպատմեն , թէ սաստիկ ձմեռվան ատենը Վարեստանի Յարշամ թագաւորէն շատ յարդ գողնալով կըփախչէր , ու փախչած ատենը յարդը ճամբուն վրայ թափթրփելով իր ճամբուն շաւիղը կըցուցընէր . և ան երկնային կամարն աւ անոր նմաննելով ու նոյն ուղղ ութիւնով ըլլալուն համար , (ինչպէս որ կռասպաշտ առասպելաբաններուն մեկ քա-

Նիները կըկուծէին թէ ան յարդովք մէ յակուլ երկինքը փախած ըլլայ, ու փախած ատենը ան շաւիղը կամ երկինքին ան կամարը շինած ըլլայ .) հին բնաբանները Շաւիղ ՀՅարդգողի ըսին անոր : Եթի թէ ՀՅարդը զողցող Ա ահազնայ շաւիղը կամ ոռքին կոխած տեղը : Եւ հին բնախօսներն ալ ՞օ-իր կաթին ըսին անոր . ինչու որ անհամար ասողերուն ճաճանչները իրարուխաւնըվելով ու կաթի պէս Ճերմակ լոյս մը տալով ՞օ-իր կաթին ըսվեցաւ : Երբոր անոր զիտակով նայելու ըլլանք, կըտեսնանք որ իրաւցունէ անհամար ասողերով լեցուն է . որ համաստեղութիւններու բաժնըված են :

5. Նիւսանցին արուելուն ունո՞ւ Հայուսային արևենուառը պարծկած անձնելու կամարը է՞նչ իր կոչւն : Ի՞նչ բանէ բոլոր բաժնե աս կամարը :

6. Քանի մը հազար տարի առաջ աստեղաբաշխները անհանկ ցիրուցան ասողերը համաստեղութեան բաժնածին, այսինքն . անոնք կենդանիի կամ ուրիշ ձևերունմանցուցած են, որ զիւրութեամբ ճանչնան անոնք : Եւ ամեն համաստեղութիւններուն ու իրենց գլխաւոր ասողերուն անուններ որւած են :

6. Ո՞վ Հայուսադէղ-ընեան բաժնեց ասուղէնը : Նայուսադէղ-ընեանը է՞նչ է :

7. Յօէս որ շնչառու Արկեազունու մը ունիս նէ , կը նաև  
տեսնալ անոր վրայ 100ի չափ անուն ունեցող համա-  
տեղութիւններ ու իրենց գլխաւոր Վատղերուն անուն-  
ներն ալ : Վունց գիտակի տեսնը վեց աստղերը վեց  
աստիճանի կը բաժնը իրենց մեծութեանը նայելով :  
Վանեն մեծը առաջին աստիճանն է . անկեց քիչ մը  
պղափիկը եւ կը որպէս աստիճան , և այնողէս մինչև վեց  
աստիճան կը համը վեն :

7. Ո՞ւ շնչառու Արկեազունու մը ունիս առաջ առ-  
անձնունք բաժնը վեն :

8. Հաստատուն Վատղերուն վրայով ալ ուրիշ բա-  
ներ կան , որ շատ զուարձալի ու օգտակար պիտի ըւ-  
լոյ ձեղի սորվելու , երբոր քիչ մըն ալ մեծնալու  
ըլլաք : Բայց հիմայ ալ դուք բաւական մեծ էք մը-  
մըտալու թէ սրչափ մեծ և բազմօրինակ ու իմաստու-  
թիւնով և բարութիւնով լիցուն են Տէլոջը զործքէ-  
րը : Եայէ Հաստատուն Վատղերուն , որոնց ամեն մէկը  
մէյմէկ արեւ են ու Առլորտակներ ունին որ իրենց բո-  
լորտիքը կը դառնան . և ան Առլորտակներն ալ իրենց  
վուսիններուն հետ անթիւ բնակիչներ ունին իրենց  
